Արձանագրության 3

Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պող. 27/8 հասցեում գտնվող հեծանվահրապարակի պահպանման և շահագործման ծառայության ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/33 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.03.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Յու. Մամիկոնյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղրամյան /գնահատող/, Լ. Մուրադյան /գնահատող/
Ա. Գասպարյան /բացող/, Մ. Աբրահամյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Յու. Մամիկոնյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես.

-նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, սակայն ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքված թիվ 1 համաձայնագրում նշված գումարը չի համապատասխանում պայմանագրում նշված գումարին, միաժամանակ համաձայնագրում նշված գումարը պակաս է մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից /2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով/, բացակայում է նախկինում կատարած պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները և այդ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

1.3 Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը, սահմանված ժամկետում շտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Յու. Մամիկոնյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 11.03.2019թ, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5,դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Յու. Մամիկոնյան

Անդամներ՝ ---------- Ա. Բաղրամյան

---------- Ա. Գասպարյան

---------- Մ. Աբրահամյան

---------- Լ. Մուրադյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան